ԿԻՍԱՎԵՐ ՊԱՏԵՐ ԱՎԵՐԱԿԻ ՓՈԽԱՐԵՆ

Մոտ 25 տարի առաջ Զվարթնոցի մասնակի վերականգնման առաջարկով հանդես եկավ ճարտարապետ Ս. Մնացականյանը, սակայն նկատի առնելով գոյություն ունեցող հուշարձանի, ավելի ճիշտ՝ ավերակի առկա վիճակն ու եղածը անձեռնամխելի պահպանելու անհրաժեշտությունը, այն չիրացվեց։ Այդուհանդերձ, ավերակի արևելյան կողմում սխալներով վերականգնվեց մի պատահատված, որի ավելորդությունը բացահայտելուց հետո անգամ նույնպիսի սխալներով վերականգնվեցին ևս երկու պատահատվածներ՝ վնաս հասցնելով տաճարի անաղարտությանը։ Առ այսօր մեզ չհաջողվեց պարզել այդ անթույլատրելի գործողությունների հեղինակի ով լինելը, իսկ սխալ վերականգնված պատերը գոյատևելու քաղաքացիական իրավունք ստացան բուն հուշարձանի օրգանիզմում՝ տարակուսանքի մեջ թողնելով հուշարձանը գիտականորեն դիտարկողներին։

Այժմ փորձ է արվում Զվարթնոցը մասնակիորեն վերականգնել՝ ավելի մեծ չափերով։ Եթե վաթսունական թվականներին առաջարկվում էր վերականգնել տաճարի առաջին աստիճանի մեծ թմբկապատի 32 նիստերից երեքը միայն, ապա այժմ՝ բոլոր 32-ը՝ ողջ բարձրությամբ, որ հասնում է 20.5 մետրի, այսինքն՝ յոթհարկանի բնակելի շենքի բարձրության։

«Կուլտուր-լուսավորական աշխատանք» հանդեսի 1987 թ. առաջին համարում տպագրված «Զվարթնոցի վերականգնման հարցի շուրջը» հոդվածում տողերիս հեղինակը մանրամասն շարադրել է, թե ինչու է այն անթույլատրելի, առավել ևս՝ անհնար Զվարթնոցի մասնակի վերականգնումը գոյություն ունեցող ավերակի վրա՝ ավերակի իսկ քարերով ու ձևավոր բեկորներով։ Թվում էր՝ մասնակի վերականգնումը մերժող ծանրակշիռ փաստարկների սոսկական թվարկումն իսկ մարդկանց հետ կպահեր վնասակար հետևանքներով հղի գործողություններ ձեռնարկելու մտքից, մանավանդ, որ նախկինում այդպիսի առաջարկներ եղել ու

հիմնավորապես մերժվել էին։ Մինչդեռ, ինչպես երևում է, Զվարթնոցն ավերակի տեսքով «չի պառկում» մարդկանց ուղեղներում։

Զվարթնոցն այն հուշարձանն է, որ, անկասկած, ենթակա է ԱՄԲՈՂՋԱԿԱՆ վերականգնման, դրա նախադրյալները ռեալ են և հեռանկարային։ Եվ, ընդհանրապես, չպետք է մոռանալ, որ ցանկացած շինության արժեքավորումը ճշմարիտ է, երբ այն դիտվում է ամբողջության մեջ։ Նրա, թեկուզև կարևոր մասերի, տպավորությունն առանձին վերցրած անպայման, թերի կլինի, երբեմն նույնիսկ անհասկանալի։ Չի բացառվում նաև, որ որոշ դեպքերում ընկալվի ոչ շահեկանորեն, որ մասնակի վերականգնման փորձը չարդարացնի այն իրականացնողների սպասելիքները։ Այնպես, որ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության աշխատակից, ճարտարապետ Լիպարիտ Սադոյանը իզուր է փորձում հավատացնել, թե մասնակի վերականգնումից հետո «Զվարթնոցը կհառնի իր ամբողջ վեհությամբ», («Սովետական Հայաստան» օրաթերթ. 24 ապրիլի, 1988)։ Չէ՞ որ մասնակին շփոթեցնում է դիտողին, նրա մտապատկերում աղճատում ընդհանուրը, ամբողջականը։

Բայց սա չէ, իհարկե, կարևորը և ոչ էլ այն, որ մասնակի վերականգնումը ինչ-որ չափով կարող է արգելակել ամբողջականի վերականգնումը երբևէ։ Կարևորն այն է, որ գոյություն ունեցող ավերակի վրա մասնակի վերականգնումը հնարավոր չէ իրագործել։ Երբեմնի կանգուն Զվարթնոցը եղել է Երևանի օպերայի և բալետի թատրոնի բեմական աշտարակի բարձրության մի կառուցվածք։ Այսօրվա հուշարձանի պահպանված տուֆակերտ հիմքերը վաղուց «ծերացել են», ֆիզիկապես թուլացել և ի վիճակի չեն իրենց վրա կրել այնպիսի մի բեռ, ինչպիսի ծանրություն կունենա թեկուզև մասնակիորեն վերականգնվելիք շինության արտաքին թմբկապատը։ Հին հիմքերի վրա բարձրացնելու դեպքում այն կկործանվի՝ շինարարությունը դեռ չավարտված։

Մասնակիորեն վերականգնվելու համար անհրաժեշտ կլինի ամբողջովին քանդել-վերացնել գոյություն ունեցող հիմքերը և դրանց տեղում ստեղծել նոր հիմքեր՝ ժամանակակից նորմերով և չափերով։

Շատերը դեռևս չեն գիտակցում, որ Զվարթնոցը միայն արտաքին պատ չէ, դեկորացիա չէ, նրա ներքին բովանդակությունը նույնքան կարևոր է, որքան և արտաքինը։ Բացի այդ, հսկայական բարձրության արտաքին պատի կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ կլինի ստեղծել հատուկ կառուցվածքներ։ Դրանց կարող են փոխարինել հուշարձանի ներքին կառուցվածքները։ Եվ ահա այս վերջիններս իրենց նոր հիմքերի վրա վերականգնելուց հետո պարզ կդառնա, որ մեր օրերում գոյատևող հուշարձանը իսպառ վերացել, դադարել է գոյություն ունենալուց… Գլխավոր վարչության աշխատակիցները մեր հուշարձանների բախտով ապրող մասնագետներ են, սակայն, ըստ երևույթին, նրանցից ոչ բոլորն են ռեալ պատկերացում ձեռնարկվող գործողության հետևանքերը։

Զվարթնոցը, ինչպես և ամեն մի հուշարձան, ունի իր յուրահատկությունները, որոնց նկատմամբ պետք է ցուցաբերել հատուկ վերաբերմունք։ Բանն այն է, որ ավերակում առկա բեկորների որոշ մասի նշանակությունն աննկարագրելիորեն մեծ է կործանված հուշարձանի ամբողջական կերպարի վերստեղծման համար։ Եվ ահա այդ բեկորները, հազար երեք հարյուր տարի հողի տակ մնալուց հետո, այս դարասկզբին պեղվել-հանվել են և շուրջ 80-85 տարի ընկած են բաց երկնքի տակ, ենթարկվելով անձրևի, արևի ու քամու քայքայիչ ազդեցությանը։ Հասկանալի է, որ դրանք զգալի չափով վնասվել են ու լավ պահպանման խիստ կարիք ունեն։ Երբ 1986 թ. ապրիլի 23-ին գլխավոր վարչությունում, ի թիվս այլ հուշարձանների, քննության առնվեց նաև Զվարթնոցի հարցը, խնդիր դրվեց առաջին հերթին փրկել բեկորները հետագա քայքայումից… Եվ եթե 25 տարի առաջ դրանք չափագրվում էին սանտիմետրի, անգամ միլիմետրի ճշգրտությամբ, ապա այսօր մենք զրկված ենք այդ հնարավորությունից։

Անցած երկու տարիների ընթացքում Լ. Սադոյանի ղեկավարությամբ Զվարթնոցով զբաղվողները, կարևորը թողած, տարված են միայն իրենց հետաքրքրող, իրականում՝ երկրորդական հարցերով։ Նրանք տասնյակ հազարներ արժեցող աշխատանքներ են իրականացնում ճանապարհի, մայթերի, առուների, ցանկապատերի, նորաստեղծ մուտքերի կառուցման ու բարեկարգման ուղղությամբ, ավերակում առկա կարևոր բեկորները մի տեղից մի ուրիշ տեղ են տանում ու վերադասավորում, թողնելով դարձյալ բաց երկնքի տակ, ենթակա առավել վաղ քայքայման։ Հարց է առաջանում. ինչի՞ համար են այդ նորաստեղծ կառույցները, եթե բուն ավերակը գնալով որակազրկվում է։

Զվարթնոցով այժմ զբաղվողները հաշվել են, որ «տաճարից մնացել է մոտ 1500 բեկոր… պահպանվել է առաջին հարկի քարերի 30, երկրորդի՝ 18-20, երրորդի միայն 6-8 տոկոսը»։ Մասնակի վերականգնողների կարծիքով, շինարարության ընթացքում պիտի օգտագործվեն առկա քարերը, իսկ հուշարձանը լիովին կվերականգնվեր, եթե պահպանված լիներ նաև վերին մասերի քարերի գոնե 30 տոկոսը։

Բայց բանն այն է, որ այդ 1500 քարերից և ոչ մեկը պիտանի չէ շարելու։ Եթե դրանք այժմ դասավորված են հորիզոնական հարթ տափարակի վրա, դեռ չի նշանակում, թե նույն հաջողությամբ կարող են շարվել ուղղաձիգ պատի ձևով։ Այդ քարերը կարող են օգտագործվել միայն մի պարագայում՝ եթե նախօրոք կանգնեցվի երկաթբետոնե պատ, նոր միայն այդ քարերը սոսնձվեն կամ երկաթե գամերով ամրացվեն երկաթբետոնե պատին։ Բայց այդպիսի բաներ անում են երեխաները, երբ բռնած թիթեռները գնդասեղով ամրացնում են ստվարաթղթին։

Մասնակի վերականգնում ասած բանը այս դեպքում պարզապես ինքնախաբեություն է, որ հրամցվում է որպես շինարվեստ։

Ի վերջո, անկարևոր չէ նկատել, որ տեղում՝ գետնի վրա, ոչ բոլոր քարերն են ճիշտ դասավորված. ներքին մասերի բեկորները ներկայացված են

որպես արտաքին ճակատ ձևավորող բեկորներ, քիվերի ոչ բոլոր բեկորներն են դասավորված ըստ տաճարի աստիճանների (ոչ հարկերի) և այլն։

Մինչդեռ հուշարձան ուսումնասիրողը պարտավոր է տեսնել որ բեկորը որտեղ է ընկած, որպեսզի որոշի, թե այն երբեմնի կանգուն շինության ո՞ր մասն է կազմել, որտեղի՞ց է ցած գլորվել։ Երբ տարիներ առաջ Ս. Մնացականյանը հուշարձանի տարբեր տեղերից որոշ ձևավոր քարեր ի մի բերեց առանձին որոշ հանգույցներ ամբողջական տեսնելու նպատակով, գիտնականները ստիպեցին այդ բեկորները հետ տանել իրենց տեղերը։ Այժմ Լ. Սադոյանը ամենինչ հավաքել, տեղափոխել է, ապագա հետազոտողին զրկելով այլևայլ հարցերի վերաբերյալ որոշակի եզրակացությունների հանգելու հնարավորությունից։ Ահա այս առումով նա փաստորեն վնաս է հասցրել հուշարձանին։ Նա դրա իրավունքը չուներ։ Նման բան կարող էր անել նախօրոք չափագրելով և գծելով բեկորները և ապա դրանք ի մի բերելով՝ տեսներ հուշարձանի կամ նրա որոշ հատվածների ամբողջությունը՝ պատկերված թղթին։

Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության գիտական խորհուրդը, վարչության պետ Լ. Բարսեղյանի նախագահությամբ, այս տարվա մայիսի 6-ին որոշում ընդունեց Զվարթնոցի մասնակի վերականգնման հարցը հանգամանորեն քննարկել սեպտեմբերին կայանալիք իր հերթական նիստում։ Պետք է ենթադրել, որ մինչ այդ, բուն ավերակում որևէ շինարարական աշխատանք չի կատարվի։ Եվ դա շատ կարևոր է. Զվարթնոցի շահերը պահանջում են, որ նրան առնչվող ամեն ձեռնարկում լինի համակողմանի կշռադատված, մասնագիտորեն ճշգրիտ, որպեսզի չդառնանք ավերի. նորօրյա կորուստների ականատես։

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

«Գրական թերթ», 12 օգոստոսի 1988 թ.: